ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1380 28.10.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ՝
պարոն Վ. Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄՏՊԹ № 4582
29. 10. 13

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ՁՊՎ, արձանագրել է, որ ձերբակալված անձանց ազատ արձակելուց չի պահպանվում ՀՀ քր. դատ. օր-ի 132 հոդվածի 1-ին կետի, 3-րդ ենթակետի պահանջը, այն է <<*Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե՝ լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել*>>:

Ձեզ ենք ներկայացնում խնդրին առընչվող մեկ օրինակ. ըստ <<Ձերբակալված անձանց հաշվառման>> գրանցամատյանի Հայարփի Հրանտի Դավթյանը ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 27.06.2013թ-ին ժամը 20^{50}-ին և ազատ է արձակվել 30.06.2013թ-ին ժամը 16^{30} : Նշված անձին ազատ արձակման հիմք է հանդիսացել ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Տ. Մարդանյանի թիվ ՏԴ /0037/0613 որոշումը՝ *Հ. Դավթյանի նկատմամբ խափանման միջոց կալանք կիրառելու մասին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Տավուշի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Բաղիրյանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ, այն հիմնավոր չլինելու պատճառով:*

Նշենք, որ հաջորդիվ քննիչի կողմից մեղադրյալին ազատ արձակելու վերաբերյալ ոչ մի որոշում չի կայացվել:

7262

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Հիմնախնդրի վերաբերյալ Դիտորդական խումբը զրուցեց ՀՀ ոստիկանության ՔԳՎ Տավուշի մարզի քննչական բաժնի պետի տեղակալ Ա. Ավետիսյանի հետ, պարոն Ա. Ավետիսյանը մեկնաբանեց, որ <<դատախազի կողմից ունեն հանձնարարական, որ ձերբակալվածը պետք է դատարանի դահլիճից անհապաղ ազատ արձակվի, եթե դատարանը մերժել է նրա նկատմամբ խափանման միջոց կալանք ընտրելու միջնորդությունը և անհրաժեշտություն չկա քննիչի կողմից որոշում կայացնել ազատ արձակման վերաբերյալ>>:

Այսպիսով՝ Դիտորդական խումբը գտնում է, որ ձերբակալված անձը ենթակա է ազատ արձակման միայն վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստը և տալ մեկնաբանություն՝ ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ.Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 3454 << 05 >> 12 2013թ.

Ձեր 28.10.2013թ. թիվ 2621/1380 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված հանգամանքը ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, Տավուշի մարզային վարչությունում, իսկ քննչական գլխավոր վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Հայարփի Դավթյանը ավագ քննիչ Ս.Բադիրյանի կողմից ձերբակալվել և ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ է ընդունվել 27.06.2013թ. ժամը 20.50-ին: 30.06.2013թ. ժամը 16.30-ին Հ.Դավթյանը տեղափոխվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Բերդի նստավայր՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու համար: Դատարանի կողմից Հ.Դավթյանի նկատմամբ խափանման միջոց՝ կալանք կիրառելու միջնորդությունը մերժվել է և վերջինս նույն օրը ժամը 20.30-ին դատարանի դահլիճից ազատ է արձակվել:

Ինչ վերաբերվում է քննիչի կողմից մեղադրյալին ազատ արձակելու վերաբերյալ որոշում չկայացնելուն, ապա ծառայողական քննության արդյունքներով նախաքննական մարմնին տրվել է համապատասխան հանձնարարականներ նմանատիպ դեպքերը բացառելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ տվյալ դեպքում անձի իրավունքները չեն խախտվել:

ՀՀ ոստիկանության շտաբ